

5.4. 2013 թվականի փետրվար ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մշտադիտարկում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, ՀՀ շրջակա բնական միջավայրը 2013թ. փետրվարին ունեցել է հետևյալ բնութագիրը.

5.4.1. Օդային ավազանի որակի մշտադիտարկում: Երևան քաղաքի 6 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ակտիվ նմուշառման միջոցով վերցվել է օդի 459 փորձանմուշ: Որոշված նյութերից ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ: Քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ազոտի օքսիդների (ազոտի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ և ընդհանուր օքսիդներ) և ծծմբի երկօքսիդի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 14 357, ազոտի օքսիդների համար՝ 4 668, ծծմբի երկօքսիդի համար՝ 23 667 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի պասիվ նմուշառման 45 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 314 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մշտական դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 23 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.6 անգամ:

Վանաձոր քաղաքի մշտական 3 դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 252 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 3.0 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 192 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ:

Ալավերդի քաղաքի մշտական 3 դիտակայաններում և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 252 փորձանմուշ: Որոշված նյութերից փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 2.5 անգամ, իսկ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան՝ 1.3 անգամ: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4 788, ազոտի օքսիդների համար՝ 2 115, ծծմբի երկօքսիդի համար՝ 3 585 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՄԹԿ-ն գերազանցել է 2.2 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման

18 և հարակից Մադան գյուղի տարածքում տեղադրված 20 դիտակետերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 304 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.7 անգամ:

Հրազդան քաղաքի մշտական դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և ցեմենտի փոշու պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 85 փորձանմուշ: Մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման 20 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 143 փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Արարատ քաղաքի մշտական դիտակայանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 28 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 3.0 անգամ:

Օաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման 14 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի 112 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնոօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4 809, ազոտի օքսիդների համար՝ 624 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Քաղաքի մոնիտորինգի կայանում շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 84 փորձանմուշ: Որոշված նյութերից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման համապատասխանաբար 16, 15 և 10 դիտակետերի միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 125, 102 և 79 փորձանմուշ: Վաղարշապատ քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Աբովյան և Սևան քաղաքների մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմաններում, իսկ ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի արդյունքները վերստուգման կարիք ունեն:

Ամբերդ գյուղում տեղադրված կայանում վերցվել է օդի 79 և փոշու 26 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 32 քիմիական տարրերի պարունակությունները: Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

5.4.2. Մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում: Փետրվարին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 29 ջրային օբյեկտների 64 դիտակետերում: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 45-ական ցուցանիշ:

Սակերևութային ջրերի քիմիական կարգավիճակը փետրվար ամսին

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի	
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք	Դեբեդ գետի ավազան	Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4	Նիտրատ իոն	
			3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3	Նիտրատ իոն	
			4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն	
		Դեբեդ		5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն
				6	ք.Այրումից 0.5 կմ վերև	3	ԹԿՊ, նիտրատ իոն
				7	ՀՀ պետական սահմանի մոտ	3	ԹԿՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն
		Չորագետ		8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	2	
				10	Գետաբերան	2	
		Տաշիր	12	Մարտոտկա գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	
		Մարցիգետ	13	Գետաբերան	3	Նիտրատ իոն	
		Ախթալա	14	Գետաբերան	5	Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, երկաթ, սուլֆատ իոն	
		Գարգառ		210	Գետաբերան	2	
				342	Ակունք	3	ԹՔՊ
	Շնող	343	Գետաբերան	3	ԹՔՊ, ամոնիում իոն		
	Աղստեղ գետի ավազան	Աղստեղ		15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	2	
				16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	3	Ամոնիում իոն, ԹՔՊ
				17	ք.Բջնանից 1 կմ վերև	2	
				18	ՀՀ պետական սահմանի մոտ	3	Ամոնիում իոն, ԹՔՊ
		Գետիկ		19	ք.Ճամբարակից 0.5 կմ վերև	2	
20				Գետաբերան	2	ԹՔՊ	
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք	Սևջուր գետի ավազան	Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	3	ԹՔՊ, ընդհանուր ֆոսֆոր	
			41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավարևելք	3	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր	
			42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	
	Քասախ գետի ավազան	Քասախ	47	Գետաբերան	3	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	
	Հրազդան գետի ավազան (միջին ներքին հոսանք)	Հրազդան		52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր
				53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, ԹՔՊ, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր
				54	Արգնի ՀեԿ-ից 0.5 կմ ներքև	3	ԹԿՊ, ԹՔՊ, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր
				55	ք.Երևանից 6 կմ ներքև, Դարբնիկ գյուղի մոտ	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
				56	Գետաբերան	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
		Գետառ	59	Գետաբերան	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
	Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	3	Ամոնիում իոն, նիտրատ իոն		
	Մարմարիկ գետի ավազան	Մարմարիկ	58	Գետաբերան	4	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	
	Ծառաղբյուր գետի ավազան	Ծառաղբյուր		311	ք.Ծաղկաձորից վերև	2	
312				ք.Ծաղկաձորից ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրավազանային կառավարման տարածք	Գետավազան	Ջրային օբյեկտ	Դիտակետի համարը	Դիտակետի տեղադրությունը	Քիմիական կարգավիճակի դասը	Ըստ տվյալ ցուցանիշի
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք	Վեդի գետի ավազան	Վեդի	80	Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև	2	
			82	ք.Արարատից 2 կմ ներքև	3	Ամոնիում իոն
	Արփա գետի ավազան	Արփա	83	ք.Ջերմուկից 0.5 կմ վերև	2	
			84	ք.Վայքից 0.5 կմ վերև	2	
			85	ք.Վայքից 0.5 կմ ներքև	2	
			86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	2	
			87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	2	
			88	Շատին գյուղից 0.5 կմ ներքև	2	
		Եղեգիս Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	2	
Հարավային ջրավազանային կառավարման տարածք	Մեղրի գետի ավազան	Մեղրիգետ	235	Ակունք	2	
			89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	2	
			90	Գետաբերան	3	ԹՔՊ
	Ողջի գետի ավազան	Ողջի	91	ք.Քաջարանից 1.7 կմ վերև	2	
			92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	5	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն
			93	ք.Կապանից 0.8 կմ վերև	4	Մանգան, կոբալտ, մոլիբդեն, վանադիում
			94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	5	Պղինձ, մանգան, կոբալտ
					4	Ցինկ, կադմիում, մոլիբդեն, վանադիում
	Արծվանիկ գետի ավազան	Արծվանիկ	95	Պոչամբարից 0.5 կմ վերև	3	ԹՔՊ, կոբալտ, վանադիում
			96	Գետաբերան	5	Մոլիբդեն, մանգան, վանադիում, սուլֆատ իոն
	Գեղի գետի ավազան	Գեղի	97	Աջաբաջ գյուղից 0.5 կմ վերև	2	
			98	Գետաբերան	3	Ամոնիում իոն
	Որոտան գետի ավազան	Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	2	
			100	ք.Սիսիանից 1 կմ վերև	2	
101			ք.Սիսիանից 2 կմ ներքև	2		
102			Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	2		
Սիսիան գետի ավազան	Սիսիան	103	Արևիս գյուղից 0.5 կմ վերև	2		
		104	Գետաբերան	2		
Գորիս գետի ավազան	Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	2		
		107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	5	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	